«Թող ձեր սերը հաղթի» գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններ

1. Գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ Վիճակահանություն) անցկացվում է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ կամ Բանկ) կողմից:
2. Վիճակահանության ներքոգրյալ բոլոր պայմանների պահպանման դեպքում Վիճակահանության մասնակիցը հնարավորություն է ստանում հաղթելու Lumen Moments-ի նվեր քարտ:

3.1 Facebook-ում վիճակահանությանը մասնակցելու հնարավորություն կստանան այն անձինք, որոնք 2026թ. հունվարի 31-ից Երևանի ժամանակով ժամը 11:00-ից սկսած մինչև 2026թ. փետրվարի 4-ը Երևանի ժամանակով ժամը 23:59-ը ներառյալ.

- կհետևեն «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ֆեյսբուքի պաշտոնական էջին՝ https://www.facebook.com/Ameriabank
- մրցույթի հրապարակման տակ մեկնաբանություն կթողնեն՝ նշելով (tag) իրենց երկրորդ կեսին

3.2 Instagram-ում վիճակահանությանը մասնակցելու հնարավորություն կստանան այն անձինք, որոնք 2026թ. հունվարի 31-ից Երևանի ժամանակով ժամը 11:00-ից սկսած մինչև 2026թ. փետրվարի 4-ը Երևանի ժամանակով ժամը 23:59-ը ներառյալ.

- կհետևեն «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ինստագրամի պաշտոնական էջին՝ https://www.instagram.com/ameriabank/
- մրցույթի հրապարակման տակ մեկնաբանություն կթողնեն՝ նշելով (tag) իրենց երկրորդ կեսին

4. Վիճակահանության մասնակցությունն անվճար է:
5. Վիճակահանության արդյունքների ամփոփումը տեղի կունենա ս.թ. փետրվարի 5-ին .
   - Ֆեյսբուքյան էջի մրցույթի հաղթողները կհայտարարվեն Ամերիաբանկի ֆեյսբուքյան էջի Վիճակահանության մասին հրապարակման մեկնաբանության բաժնում՝ էկրանի տեսագրության (screen recording) միջոցով:

- Ինստրագրամի մրցույթի հաղթողները կհայտարարվեն Ամերիաբանկի ինստագրամյան էջի սթորի բաժնում՝ էկրանի տեսագրության (screen recording) միջոցով:

6. Վիճակահանության հաղթող կճանաչվի այն մասնակիցը, ում անունը պատահականության սկզբունքով՝ Comment picker գործիքի միջոցով կընտրվի Վիճակահանության ամփոփման ընթացքում:
   Յուրաքանչյուր հարթակում ընտրվելու է վիճակահանության 3 հաղթող:
7. Հաղթող մասնակիցների հետ Բանկը լրացուցիչ կապ կհաստատի՝ նշելով մրցանակի ստացման եղանակը և վայրը:
8. Մրցանակը ստանալու համար հաղթողը պետք է անձամբ մոտենա Բանկի կողմից նշված վայր՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

Գովազդային վիճակախաղի կազմակերպիչ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2
Հեռ.՝ 010 561111